



ԾԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՅԱԿԱՆ

Ի Պուլկարիա Տարեկ. 10, Վեցամս. 5 ֆր. ԿԱՆԴՆԻԿ: Արտատահման Տարեկ. 12. Վեցամս. 6 ֆր.
Գրութիւնք ետ չին տրուիր: Հասցէ DIRAN PAPAŽIAN YELDIZ TABIA, VARNA BULGARIE

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր հեռավոր ու մոտակայ համակիրներու կողմէ ժամանակէ մը ի վեր եղած առաջարկին գոհացում տալու նպատակաւ ուրոշեցինք «Հայեցիտի» ծաւալը 161րդ թիւէն սկսեալ ընդարձակել, արդի պարունակութեանէն 2 երես կամ 200 տողի չափ, առանց գրնոյ յաւելման:

Այս կարգադրութիւն որչափ յանդգնութիւն մը համարուի արդի անտեսական պայմաններուն մէջ, կրնայ սակայն շատ դիւրաւ մեկնուիլ, ի նկատի առնելով մեր թերթին գտած ընդունելութիւնը բաւական ընդարձակ շրջանակներու մէջ, որոյ գործնական ապացոյցը տեսած ենք այլ և այլ առիթներով: Հոս տեղն է շնորհակալութեամբ արձանագրել Միացեալ Նահանգաց ոստանէն մեր համակիրի բարեկամ Տիար Տօթ. Յովհաննէս Արշակունիի բարեացակամութիւնը, որով բարեհաճեցաւ յատկապէս Ամերիկա պատրաստել տալով, մեզ նուիրել Հայեցիտի նոր ու ճաշակաւոր վերնագրի մը *փոխընկեր*, զոր պիտի տեսնեն ընթերցողք 161րդ թուոյն:

Ի մէջ այլոց պիտի հրաւարակենք նաեւ Ամերիկայի, Ֆրանսայի, Իգիպտոսի և Յունաստանի Հայ գաղութներուն ընկերական ու ընտանեկան նիստ ու կացին վրայ զուարճախառն թղթակցութիւններ, զոր խոստացած են պարբերաբար ղրկել մեզ համակիր բա-

րեկամներ: Վերջին երեսէն ազգերը վերցնելով, հոն գրքի ձեւով պիտի յեննք Ֆրանսերէնէ թարգմանուած իսկա հետաքրքրաշարժ ու արկածալից գիտական թերթին մը որ յետոյ պիտի կրնայ կտրուիլ ու գիրք կազմուիլ:

Ի նկատի առնելով թուղթի գններուն տարօրինակ բարձրացումը և դրամոց աճիւններուն ներկայ անորոշ վիճակը, առանց բաժանորդագներու յաւելման, մեր այս զոհողութիւնը անշուշտ պիտի գնահատուի մեր ընթերցողներէն: Միայն թէ կը խնդրենք իրենցմէ, որ թերթը խել մը ձրիաճարակներուն կարդացնելով, չը քաջայերեն այդպիսիները ի մեծ վնաս խմբագրութեանս, որ ահաւասիկ նոր գոհացութեան մըն ալ կ'ենթարկուի իրենց փափագանաց գոհացում տալու համար. ընդհակառակը ստիպեն զիրենք, որ շաբաթը 20 տանգիմ յատկացնեն թերթի մը, որ արտատահմանի մէջ նմանօրինակ թերթերու ամենէն յարատեւոյն եղած է իր չորս տարուան կեանքովը:

Գիտնալ պէտք է որ թուղթին և տրպագրութեան ծախքէն խնայողութիւն մը ընելու համար, Հայեցիտ պիտի տպագրենք իր բաժանորդներուն թուոյն չափ, հետեւաբար ամեն անոնք որ թիւ մը կորսնցնեն, դժբաղդաբար մերժման պիտի հանդպին, երբ դիմեն մեզ հետ մըն ալ ուզելու համար, ինչ որ մինչև հիմա յաճախ կը պատահէր:

Ի ԶԳ ԽՅԻ ՏԵ

Մանչեսթրի ազգային քայս անգամ մեծ քանակութեամբ ճերմակեղէն ու կտաւ հաւաքելով շրջեր են Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութեան, հիւանդանոցի պատուարեալներուն յատկացուելու համար:

— Սեփաստիոյ Խորհանայ գիւղին մէջ վերջերս կատարած գայլ մը մտնելով քանի մը հոգի կը յոշոտէ, որոնց մէջ կը գտնուի նաև տեղւոյն Տ. Սմբատ Մազմանեան քահանան: Գայլը խեղճ մարդուն ոտամոքսը կը բանայ և աղիքները կ'ուտէ:

— Առձեռն զտնուած միջոցներով կարելի է եղեր Պատրիարքարանէ նպաստի փոքրաքանակ գումարներ շրջել մէկ քանի գաւառներ, ամենէն աւելի կարօտներուն բաժնուելու համար:

— Տիարպէքիւրի բողոքական հասարակութեան ժողովարաններուն մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ շարականներէն ու երգերէն մէկ քանիները սկսեր են երգուիլ: (Որովհետեւ մինակ «Առաւօտ լուսոյն» բողոքականի 3000 երգ կ'արժէ):

— Նիւ-Եօրքէն մեզ կը գրեն. «Ապրիլ 1ին տեղւոյս Ս. Յովհաննէս Հայկական եկեղեցւոյ բացումը տեղի ունեցաւ: Գեր. Սարաճեան Սրբազան որ յատկապէս հրաւիրուած էր, հանգիսաւոր Ս. Պատարագ մատոյց, նոյն օրը առաւօտեան ժամը 10ին: Զորս հարիւրի մօտ ժողովուրդ գրաւած էր եկեղեցւոյ նորաշէն նստարանները: Յաւարտ արարողութեան Գեր. Առաջնորդ Սրբազանին հրաւիրանքովը Տիար Թաւադեան ծախուց մասին ընդարձակ տեղեկութիւններ տալով, անմիջապէս հանգանակու-

թեան մը ձերունարկուեցաւ, որ 800 տուար (4000) ֆրանք հասոյթ արտագրեց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր

Երեք հարիւր հազար Հայեր Զարգուեցան բայց հայութիւնը չի ցնցուեցաւ, այսպէս չորս հարիւր Վասպուրականցի Հայեր կրնան թրքացած ըլլալ, բայց ասով Վասպուրականի անունը պաշտելի ըլլալէ չը դադարի, որչափ ալ մէկ քանի ցնդած ուղեղներ չը գիտենք ինչո՞ւ և ի՞նչ անձնական հաշիւներով ըստւերել ուզեն զայն:

Վասպուրականի Որբախնամի յայտարարուած թեան հետ տեղական թերթի մը միեւնոյն թուոյն մէջ երեւցած եւ Վասպուրականի հայերուն մեծամասնութեան ուղղամտութիւնը ազարտելու սահմանուած առաջնորդողը արդեօք տեղին տեղը չեղարացներ, չլստե՞լ կ'ուզէր Որբախնամի անձնուէր ջանքերը թէ ոչ պարզ վրէժ մը լուծել վանեցիներուն հըռ-չակաւոր թուրքին:

Ինչ որ ալ ըլլայ, ամօթ է, շատ ամօթ, որ մեր որբիներուն հացին հետ իսկ կը խաղանք մեր անձնական ստոր հաշիւներուն համար: Եթէ մեղքէ չենք վախնար, գոնէ ամչնանք:

Ա.ՔՅԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան, թէ երկսեռ Որբախնամ ընկերութիւնը ապրիլ մէկէն ըսկսած է իր բաժնեգիրները եւ մասնաւոր նուէրները դանձել և ընդունել:

Ուստի հրապարակաւ կը յայտարարենք եւ լիայոյս ենք որ թէ տեղւոյս եւ թէ արտասահմանի ընդհ. հայութիւնը չպիտի զլանան իրենց նիւթական ու բարոյական աշակցութիւնը եւ օգնութիւնը, որովհետեւ սոյն պէտքը արդի ժամանակուան անհրաժեշտ և վսեմնե-

րուն էն կարեւորագոյնն է. սոյն որբիկներն են որ պիտի կազմեն ապագայ հայութեան հաստատուն կռուանը:

Մնամք յարգանք

Ի դիմաց գործ. ժողովոյ

Ատենադպիր

Վ. Ատենապետի

Յ. Կ. Ճանկիրեան Յոյսեւի Բաղնախան

Հասցէ

Յ. Կ. Ճանկիրեան

(Ընկերութեան վերաբերեալ)

(Պուլկարիա)

Վառնա

Յ. Գ. Ընկերութեանս կնիքը չի կրող ընկալագիրներու վճարուած ստանկերու մասին վարչութիւնը պատասխանատու չէ:

Բարիգէն մեզ կը գրեն թէ ապրիլ 16էն մինչև 21 շաբաթ, վեց օրուան մէջ արուեստահանդէսը այցելելու են 646,964 հոգի, որոնց 346,777ը մուտք վճարելով, իսկ 300,187ը ձրիաբար անցեր են:

ԹԱՏԵՐԱԿԱՆ

«Վէսէլօ» հայ թատերախումբը կը պատրաստուի առաջիկայ ապրիլ 27 հինգշաբթի գիշեր ներկայացնել «Կարծեցեալ հոմանունի» անուն բարոյալից թատերախաղը, ի նպատակ վաղեմի դերասանուհի տիկին Պայծառ Փասուլեանի: Տիկին Պայծառ որ հայ թատերաբեմի զարդերէն մինեղած է, իրաւամբ կը սպասէ թատերասէր հասարակութենէն պէտք եղած քաջալերութեան:

Լիայոյս ենք որ երեսուն տարիներ թատերական տաժանելի ասպարէզին մէջ սիրտ ու հոգի մաշեցնող տիկին Պայծառ պիտի վարձատրուի նոյն գիշերը թատերասիրաց արդիւնաբեր ներկայութեամբը:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՌՆԱՅԻ ՀՈՒՐԶ

Աշնան տխուր օրերէն մէկը. 1900 հոկտ. 13ը նշանակուած էր Իրաւունքա—Հարժումական դատավարութեան պայմանօր: Օրեր առաջ սկսած էր տենդոտ ուղեորութիւն մը տիրել երկու խմբագրատանց մէջ և ամեն ոք անհամբեր կը սպասէր դատին ելքին:

Փողհարներ, որոնց բոլոր առաւելութիւնը իրենց բախտային մեծ խօսիկութիւնն է միայն, շաբաթներ առաջ սկսած էին արդէն մէկ կամ միւս կողմին դատապարտութիւնը հռչակել:

Վարդօն, հէ, անիկա տասը փաստաբան ունի, հնար է որ յաղթուի Գուրպէթեանը, անիկա իր ձեռքը ջախջախիչ փաստեր ունի: Ահաւասիկ այս և ասոր պէս ապուշ որոտումներով կը լեցունէին Վառնայի հրապարակը, ուր անկախ միտքէ և աւուղ տրամաբանութենէ զատ ամեն ինչ կը վիտարայ դերազանցապէս խելայեղ օրերու մէջ: Ամենէն կատաղին բնականաբար իր ամենէն աւելի ամէհի գափրներով կը գզրգէր երկիրը և կանխօրով կը նշմարէր ու կը ծափէր իր տիրոջ յաղթանակը: Մէկը Գուրպէթեանին, իսկ միւսը Վարդօնի ապագայ յաղթական թափաններէն զլիսած, «անկցի Իրաւունք, անկցի Հարժում» խօլ բացազանչութեանց մէջ կը փնտռէին փառքն ու սփոփանքը:

Բայց իրե՞նք...

Հիտակը ըսե՞մ, իրենք թէ և գէմբերնին անմալլ ցոյց տալ կ'ուզէին բնօրէն, բայց յայտնի էր թէ հոգեբանական անտնդ ալեծուսի վիճակի մէջ էին, որ նկարագրել կարելի չէ: Ծեքծեքումներ, ծամածոտութիւններ, յոնքի և աչքերու անկանոն երեւոյթութիւններ իրենց ներքին յոյզը կը մատնէին շատ որոշ, շատ յստակ:

Վերջապէս օրուան հերոսները իրենց ետեւն ունենալով աթիւթանթներու երկու հաւառակ բանակներ, գլխիկոր, կամ կոկոզա-

վիզ կը հասնէին դատարան, որոշեալ ատենէն կէս ժամ առաջ: Այսպէս Կը հասնէր և դատարանին մանկլաւիկը կը պոռար. «Աւրգօ, Գուրպէթեան», և ահա երկու ըմբիշները իրենց հետեորդներով մէկտեղ ներս կը խուժէին լուռ և սրտատրթի:

* * *

Դատարանը կազմուած է մէկ նախագահէ մէկ անդամէ և մէկ քարտուղարէ:

Քարտուղարը կը սկսի կարգաւ դատին վերաբերեալ պաշտօնական թուղթերը և ընթերցումը լմննալէ ետքը նախագահը խօսք կուտայ Աւրգօի փաստաբանին, որ կը սկսի կարգաւ հետեւեալը.

«Տէր Դատաւոր,

Յայտնի է թէ իմ պաշտպանեալս շատ փառաւոր անցեալ մը ունեցած է Հայոց ազգ. յեղափոխական գործին մէջ: Ինքը ժամանակաւ գետաթի ըլլալով հանգերձ, ամեն մարդկային տկարութիւններ առաթուր կոխած և աղջկան ու Հայրենիքի սիրոյ ընտրութեան մէջ աւելի իտեալական գտած է Հայրենիքի սէրը: Ահաւասիկ այս աստիճան հայրենասէր մէկն է, զոր «Իրաւունք» անուն թերթը յանդգնած է նախատել և զանի աշխարհի առջև հանրային վստահութիւնը զեղծանող ներկայացնել: Ուստի Տէր Դատաւոր, այդ թերթին արտօնատէրին և խմբագրին (*) համար կը պահանջեմ օրէնքին կանխատեսած ամենէն խստագոյն պատիժը:

Գուրպէթեանի փաստաբանը. — Տէր Դատաւոր, իմ պաշտպանեալս ալ նախատուած է բազմիցս Աւրգօի հրատարակած «Շարժում» թերթէն: Ի մէջ այլոց նոյն թերթը սա խիստ նախատալից խօսքերը ըրած է իր մէկ թղթակցին բերանովը, (**) զոր ցաւօք կը

(*) Պէտք է գիտնալ որ կառավարական վերջին օրինաց համեմատ թէ՛ խմբագիրը և թէ օտկօվոնիկը պատասխանատու են, երբ թերթին մէջ յականէ անուանէ մէկը կը նախատեն:

(**) Թղթակցի, լրագրի ու լրատուի յանցանքն ալ ըսա նոր օրինաց խմբագիրը կը քաւէ:

Ծ. Խ.

յիշատակեմ. «Յանձին Գուրպէթեանի ոռնացողը. ցեխի գործարան և այլն»: Պաշտպանեալս իր ժամանակին բողոքած է Ձեզ աղերսագրով մը. ուստի դատին մանրամասնութեան մտնելէ առաջ կը պահանջեմ որ մեր բացած դատն ալ կցուի այս դատին հետ եւ ամենքը մէկտեղ տեսնուին:

Դատաւորները բաւոր դժուր չափ կ'առնէն անան ու յետոյ վերադառնալով դատարան կը յայտարարեն թէ որոշուած է այս դատը կցել Գուրպէթեանի բացած դատին հետ, երկուքը մէկտեղ տեսնելու համար:

Ի լուր այս յայտարարութեան, բնականաբար հակագուրպէթեանը անակնկալի մը առջև զարմացած կը մնան ու վերստանալով իրենց պաղարիւնութիւնը, կ'իջնեն սանդուղներէն վար:

Այս, չարածձի Գուրպէթեան, օրէնքէն օգտուած էր:

Յտեսութիւն գալ անգամ:

Փ. ՊՈԼԻՍ

ԳՈՒՀԱԿ

Կ Ն Ո Ջ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Հնդկի առանդոթիւն)

«Կինը փոքրիկ աշխարհ մը», «Կինը անկեալ հրեշտակ մը», «Կինը սատանային գործիք», «Կինը փետուր թռուցիկ», «Կինը կատարելագործեալ սատանայ», «Կինը սրտին քահանայ», «Կինը պսակ օրհնութեան», «Կինը փուշապակ դառնութեան», «Վէնիսն ու Տիան», պարիկն աննման, կինը մաքրիկ, անբիծ՝ սրբուհի երկնային. կինը ճիւղա՝ արարած մը դժոխային, արցունքին պէս լեղի, մեղրին պէս անոյշ, «աղանիկի պէս միամիտ, օձի պէս խորամանկ», ընտանիքին խնդութիւնն ու երջանկութիւն, ցաւն ու դժբաղդութիւն, վերջապէս կինը՝ այս տարօրինակ արարածը, շունժան,

դոյնդոյն, այնքան անախտականօրէի լե-
ցուն, զանազան դարձւոց մէջ զանազան
նշանաւոր հանճարներու, անանաւոր փի-
լիսոփաներու կողմէ որակուած, սահման-
ուած է զանազան ձեւերու տակ, բայց
միշտ անձուկ նահմանով մը, իր թուումն
մասանցին մէջ միայն, եհովայի ստեղ-
ծած կինը կաւի շերտէ մը շինուած,
պէտք է խոտովանիլ թէ քիչ մը տա-
փակ է. շատ շատ կրնայ յարմարիլ ան
մեր Անաստուրցի տուսիկ, փուսիկ ֆիլ-
սոփեաներուն, բայց քաղաքակրթու-
թեան անուանուցած, նրբացուցած է-
րէկանք կնոջ գալով, որ առաջնութիւնը
շատոնց կողմէ է այդ մարդէն և զայն
իր պաշտանքին բարձունքին մէջ, իբր
պարզ խնկարկու գործածել միայն կ'յո-
ժարի, անշուշտ անհիթեթ պիտի թուի
նմանօրինակ ստեղծագործութիւն մը :
Ուրիշ մը գտնել հարկ է. այնպէս չէ՞ :
Այդ ուրիշը գտնուած է : Հիմա մտիկ
ընէ՞ք հնդկականութիւնը. տեսե՞ք թէ
ինչ գեղեցիկ կերպով կը նկարագրէ ան
կինն իր ամուսնութեանը մէջ, աւելի պեր-
ճախօս, աւելի կատարեալ քան ինչ որ
ըսուած է ցարդ կնոջ ու անոր յատկու-
թեանց մասին : Կարելի չէ աւելի տար-
բեր ձևով մը, աւելի անթերի կերպով
սահմանել կինն արարածը, բառին բո-
վանդակ առումովը :

«Ի սկզբանէ Դուացիքի,—Հնդկի գի-
ցաբանութեան արարիչը,—երկինքն ու
երկիրն ստեղծեց : Բայց երբ կարգը
կնոջ եկաւ, տեսաւ որ բոլոր տրամադրե-
լի շինուածանիւթը Մարդուն համար
սպառեր, ալ հաստատուն տարր չէ մնա-
ցեր : Ուստի շուարած, խոր մտածութեան
մէջ ինկաւ : Պահ մը յետոյ ժպիտ մը
փայլեցաւ Դուացիքի գէմքին վրայ, ու
գործի սկսաւ : Լուսնէն կլորութիւն ա-
ռաւ, օձէն վէտովէտում, բաղեղանման
բոյսերէն գրկախառնութիւն, մարդե-
րէ սարսուռ, եղեգէն ճկուն նրբութիւն :

Ժաղիկէն թաւիշ քնքշանք, տերեւնե-
րէն թեթեւաշարժութիւն, այծեամէն
ախնարի, արեւուն, ճառագայթէն խօլ
զուարթութիւն, ամպերէն արցունք,
հովերէն անկայութիւն, նապաստակէն
երկշուտութիւն, սիրահարգէն սնափա-
ռութիւն, ճնճչակներու պարանոցի
աղուամաղէն փափկութիւն, արամանդէն
կարծրութիւն, մեղրէն անուշութիւն,
վազրէն անգթութիւն, կրակէն ջեր-
մութիւն, ձիւնէն սառնութիւն, ճայէն
շաշիալիանք և տառորակէն մնչիւն : Ա-
ստնք իրարու քով բերաւ շաղուեց և կի-
նը ստեղծեց. յետոյ զայն մարդուն նը-
ւէր ըսաւ :

Ութ օր ետք Մարդը Դուացիքիի գա-
լով ըսաւ .

«—Տէ՛ր, այն արարածը զոր ինծի
նուէր ըրիր, բովանդակ կեանքս կը
թունաւորէ, միշտ կը շաղակրատէ, բոլոր
ժամանակս կը գրաւէ, պարպալ բաներու
համար կը տրտնջայ և շարունակ հիւանդ
է : Տէ՛ր կ'աղաչեմ ետ առ զայն, չեմ
կ'ընար անոր հետ ապրիլ :

Ու Դուացիքի ետ առաւ կինը : Բայց
ութ օր ետքը, մարդը նորէն գալով ը-
սաւ .

«—Տէ՛ր, կեանքս անտանելի է, ա-
ռանձնութենէ կը նեղուիմ այս արարա-
ծը քեզ դարձնելէն ի վեր : Անոր երգե-
րուն ու պարերուն յիշատակը կը խռո-
վէ զիս . կ'յիշեմ նաև անոր ակնարկնե-
րը, գրակախառնութիւնները... »

Դուացիքի ժպտեցաւ և կինը Մար-
դուն վերադարձուց :

Երեք օր ետքը Մարդը վերստին եկաւ
և ըսաւ .


«—Տէ՛ր, չեմ գիտեր թէ ի՞նչպէս կ'ըլ-
լայ այս . սակայն հիմա ապահով եմ թէ
«կինս զոր ետուր ինձ» ինծի հաճոյք
պատճառելէ աւելի ձանձրոյթ կը պատ-
ճառէ . կ'աղաչեմ Տէ՛ր, շնորհ ըրէ, ետ
առ զայն... » :

«Բայց Դուացիքի նեղանալով . —է՛,

երկան ըրիք ըսաւ . գնա՛, գլխուդ ճարը տես : — Բայց չեմ կրնար ապրիլ անոր հետ , աւելցուց Մարդը : — Բայց չպտի կրնաս ապրիլ առանց անոր ալ , պատապիսանց Դուացէրի : Ու մարդն սկսաւ հեծեծել տյն ատեն , ըսելով . «Տէ՛ր Աստուած, ի՞նչ դժբախտութիւն ! Ձեմ կրնար ապրիլ անոր հետ ! ու չեմ կրնար ապրիլ առանց անոր ! »
Թարգմ.

ՄԷՆՍԷ

Ծ Ի Ծ Ա Ղ



Ք Ի Թ Ի Մ Ը Դ Ա Տ Ը

Շիքակոյի դատարանը կը զբաղի դատով մը որ ծագած է նոյն քաղաքին և նիւ-Եորքի երկու վաճառատուններու միջեւ : Այդ դատին շարժառիթնէ Տիւուէյ ծովակալին քիթը : Շիքակոյի մէջ Մանիլայի ամերիկեան յաղթութեան երկրորդ տարեգարձին առթիւ մայիս 1ին կատարուելիք հանդէսներուն համար վաճառական մը նիւ-Եորքի մէկ վաճառատան հինգ հազար շքադրամ յանձնարարեր է որուն վրայ պէտք է գրտնուի Տիւուէյ ծովակալին կենդանագիրը : Յանձնարարութիւնը կատարուելէն ետքը Շիքակոյի վաճառականը չէ ուզեր շքադրամները ընդունիլ, ըսելով որ ատենք Տիւուէյը կը ներկայացունեն քիթին վրայ կոծիծով մը : Շիքակոյի վաճառականը կը պնդէ թէ Տիւուէյ կոծիծ չունի : Նիւ-Եորքի վաճառատունը հակառակը կը հաստատէ : Հիմա Տիւուէյ ծովակալը իբր վկայ դատարանին պիտի ներկայանայ , որպէս զի հաստատուի թէ ծովակալը քիթին վրայ կոծիծ ունի՝ թէ ոչ :

Նոր այրիացած մէկը գինեւուն մը երթալով, սպասաւորին կըսէ .

— Կարսօ՛ն, ինձ իսկն տեսակ գինի մը պիտի բերես, զոր խմելով ամեն ինչ մոռնամ . ունի՞ք :

— Այո՛ պարոն ունինք, բայց արգիւռած է, չենք կրնար տալ :

— Արգիւռած է մի՛... և ո՞վ է այդ արգելքը դնողը :

— Մեր տէրը, միւսի Պոմպարտօնէն :

— Եւ ի՞նչու համար :

— Որովհետեւ այդ գինին խմողները ամեն ինչ վայրկենապէս կը մոռնան, նոյն իսկ ... վճարելը :

Բարիզի մէջ երկու ընկեր ,

Բարեկամ , իրաւ է որ ձեր աներ հայրը խոտացած դրամօթիտը տակաւին չէ տուած .

— Այո՛, շիտակ է , վասնզի ես ալ իր աղջիկը առայժմ մոռացէր առած եմ :

Պարտապահանջ մը կէս օրին զնայ իր մէկ առնելիքը զանձնու .

— Եղբայր , գոչեց պարտկանը որ բակին մէջ սեղան նստած կը ճաշէր, ամեն ատեն կերակուրի վրայ կուգաս :

— Որովհետեւ դուն ալ ուրիշ ատեն տանը մէջ չիգաս :

Եկեղեցիին բակին մէջ .

— Միւսիւ Էտկար , կը տեսնէ՞ք սա կինը , որ հակառակ իր ունեցած աղեղութեանը, հնդկահաւի պէս կը սոնգայ :

— Բայց , բարեկամ , ատանկ ըսելով ինքզինքնիդ դժբաղդ կացութեան մէջ կը ձգէք .

— Ինչպէս :

— Որովհետեւ ... իմ կինն է .

— Ահ, հաղար ներողութիւն, դուք
ինձմէ առաջ ինքզինքնիդ դժբաղդու-
թեան մէջ ձգած էք եղբեր . . .

Ընտանեկան յարկի մը տակ ամե-
նէն շատ խոնարհուող բայը ո՞րն է .

— «Կուզեմ» բայը:

— Ո՞ր բայը վտարուած է .

— «Բաւականանալ»ը :

ՏԵՄԵՐԻՐ

(Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.)

Մեծ կայարան

Միւսիւ Երկայնաման(թարապատու)ը շա-
պիկը փոխեց, նաղարբէկեան եղաւ: Այս բա-
նը մտատանջութեան մէջ ձգեց Մ. Անդուա-
նը, որ իր խոշոր պեխերը(?) սկսաւ ողորել...
օգին մէջ:

Մարիձա գետ

Երկու տխրահաշակ պարոններ որ ատեն մը
թաղ. խորհրդոյ կնքոյն ընկերակցութեամբը
ալա քէնտինէ թաղականութիւն ընելով ու-
ղածնուն պէս չափած ու ձեւած էին, և ո-
րոնք ազգային սնտուկին ունեցած սէնէքլի
պարսեքներին տակաւին վճարած չէին, Ա-
ժանս հաշիւի և Բաւկաջո Բազարձեմի
ընկերակցութեամբ վերջին օրերս եղած օրինա-
ւոր ընտրութեան դէմ բողոքելով առաջարկեցին
որ իրենք նոյն պաշտօնին կոչուին, անշուշտ
ասկէ առջի պաշտօնավարութենէ հրաժարե-
ցուցուած ատեն աճէլէյով հոն մոռցած պար-
տամուր հակներնին վասն ի վերուստ ընելու
համար, բայց աւաղ, չի յաջողելով ձեռնու-
նայն ետ գարձան:

Բոժ. — Ի՞նչ կ'ուզեն ըսեն, կէօնիւլ զէվ-
զէկ տիր, տայիմս ումար...

Պարկաղ

25 տարիներէ ի վեր պէրպէրութիւն և
տիշտութիւն ընելով անուն հանդուստա Մար-
գար, ուստա Անտիրեաս, պապա Նիգօլի և
Հասան պապա որոշեցին ինքզինքնին տօրթու
հաշակել, բանի որ իրենք ալ շատ անգամ
ակաւյի ցաւ ունեցողներուն կը յանձնարա-
րեն չիրայով բացախ կարկարասի, կաւով բա-
ցախ լաբասի, ըրախիով քալա պատանասի, նա-
նէ եաղի և գարանֆիլ ուսուհի:

Քէօլէ ուստասիներու ժողովը արդարա-
ցի գտնելով այս որոշումը իր վճիռով արնուի-
րագործեց:

Նաւահանգիստ

Երէկ շոքեկաբով հոս խաչագող մը եկաւ
և իջեանեցաւ առաջնակարգ պանդոկ մը: Հաս-
նելէն մէկ ժամ ետքը պեխն ու մօրուսը ա-
ծիլելով, երկար տարիներ անգլիոյ մէջ ապրող
վաճառականի մը գրագրին ձեւը առաւ: Ա-
ղեքսանդրիա երթալու համար «Տիւրքիստան»
եիւր վաքօռիոյ մը կը սպասէ:

Վառնա Գրգ Թաղ

Ըօրնտիկ տուտուին տունը երկու օրէ
ի վեր մեծ պատրաստութիւն կայ, վաղուան
խտրէլէզին աթիւ չայիրին վրայ աղուր ձիւմ-
պիւշ մը ընելու, փուրը տրուած խուզիով,
սարմայով ու շրտէն տօլմասիով:

Բոժոժիկ խոստացած է աներեւութապէս
ներկայ գտնուիլ այդ ձիւնպիւշին:

ԻՍԿԷՆՏԷՐ ՇԷՀՐԻԲԵԱՆ

Կահագործ (Մառանկօղ)

Մուսալլա, Մանուկեաններու շէնքին դիմացի
փողոցին մէջ, թիւ 1159


Կը պատլաստէ բարիզեան նրբին
ճաշակաւ տնական կահկարասիքներ զա-
նազան տեսակներով: Գին դիւրամատչելի:

Ն Է Տ Ա

Պուլկար հռչակաւոր հայրենասէր գը-
րագետ Լիւպէն Գարալէլօֆի գրած սոյն
գիրքը կարժէ որ ամեն հայ կարդայ,
որով բաւական ուրոյ գաղափար մը կը
կազմէ Պուլկարիոյ ազատութենէն ա-
ռաջ Պուլկար ժողովուրդին նիստու կա-
ցին, սովորութիւններուն ու կրած տա-
ռապանքի մասին:

Գիրքը 112 փորագիր երեսներէ
կը բաղկանայ: Ստանալու համար 55
սանդիւի նամակագրոյ՝ զրկել «Իրա-
ւունք»ի խմբագրութեան:

Ամենաընտիր տեսակէն, բերնի հա-
մով ապուխտ ու երչիկ ուտել ուզողնե-
րը կը հրաւիրուին ի Մուսալլա Տ. Ե.
ւագրի Կիւմիւշճեանի նպարալաճառա-
տունը, ուր մասնագէտի մը ձեռքով
պատրաստուած ապուխտ եւ երչիկ կը
ծախուին գոհացուցիչ գինով:



Վառնա, Բռնոյախօքա փողոց թիւ 112

ԲԵՐԻՔԼԻ ԿԵՐԵԿԵՔԻ

ՊՈԼԿԱՐԱՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Կը չինէ ու կը պատրաստէ ոսկիէ և
արծաթէամեն տեսակ զօրժեր, լա-

տիկէ (ֆառլոֆ) և մետաղէ կնիքներ
քիչէնէր և կալվանօ կը պէ Կիները յոյժ
չափաւոր:

Մ. 2.

Հ Ո Վ Ա Ս Ո Ւ Ն

Սիրուն բանաստեղծութեանց հա-
տորիկ մըն է ընթերցանութեան ար-
ժանի Գինն է 25 պախլիմի շատ անող-
ներու համար չնախադրելով: Դիմել
Ջարպհանէլեան գրատուն վառնա:

ՆՈՐ

Ա Ջ Մ Ա Տ Ո Ւ Ն

Կ. ԿՅՆԱԻՈՐԵԱՆԻ



Սագալը չէշմէ, աղջկանց կիւ-
նաղիւի գէմը, վարնա:

Ոսկեղօծ, կաշեկաղմ, լաթակաղմ և
թղթակաղմ եւրոպական ճաշակաւ:

Դիւրամատչելի գիններ: Կը պատրաստէ
Նաեւ վաճառականական տոմարներ եւ
գպրոցական տետրակներ:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԵՎԵԱՆ

«Գալլ վահան» պրերգութեան հան-
գուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը
յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը:
Գինն է 1 Փրանք: Դիմել առ Վրամ Մանսվ-
եան, բոսթրէսթանթ, վարնա:

ОГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печатница „Взаимность“ — Варна